ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 15-ից 16-ը Թուրքիայի Հանրապետություն (ք. Ստամբուլ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Գնել Սանոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Թուրքիայի Հանրապետություն (ք. Ստամբուլ), 2024թ. հոկտեմբերի 15-ից 16-ը

4. **Հրավիրող կողմը**

Հրավերը ստացվել է Թուրքիայի Հանրապետության տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն International Road Federation (IRF) World Congress միջոցառմանը և վերջինիս շրջանակներում կազմակերպվող "Decarbonized and resilient transport for resilient societies and economies" թեմայով նախարարական պանելային քննարկմանը և երկկողմ հանդիպում գործընկեր նախարարի հետ:

6. **Քննարկված թեմաները**

Կոնգրեսի շրջանակում երկկողմ հանդիպում եմ ունեցել Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուի հետ: Քննարկվել են փոխադարձ կարևորություն ունեցող ենթակառուցվածքային հարցեր, ներկայացրել եմ ՀՀ կառավարության մշակած «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

"Decarbonized and resilient transport for resilient societies and economies" թեմայով նախարարական պանելային քննարկմանը հանդես եմ եկել ելույթով, որում շեշտել եմ ներկա աշխարհաքաղաքական պայմաններում կենսունակ հաղորդակցության ուղիների ստեղծման, ինչպես նաև նախկինում գործած տրանսպորտային ենթակառուցվածքների վերագործարկման, տարածաշրջանի բոլոր պետությունների միջև տնտեսական ենթակառուցվածքների լիարժեք ապաշրջափակման, կապուղիների զարգացման կարևորությունը: Ելույթում անդրադարձել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագծին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Կոնգրեսի ձևաչափը չէր ենթադրում առանձին երկրների պատվիրակների կողմից կոնկրետ առաջարկների ներկայացում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

_____ 17.10.2024 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — ՀՀ վարչապետի 13.09.2024թ. № 816-Ա
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — Գնել Սանոսյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը — Թուրքիայի Հանրապետություն (Ստամբուլ)
5. Գործուղման ժամկետները — 15.10.-16.10.2024թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — 2024թ. ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գնել Սանոսյան*
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***205500***
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	193
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	44832
	Օրերի քանակը	1
	Ընդամենը (դրամ)	***44832***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	129
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49942
	Օրերի քանակը	2
	Ընդամենը (դրամ)	***99885***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	
	Մուտքի արտոնագրի վճար	
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***350217***

կուրսը 1$= 387.15 դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան

11.10.2024թ.